



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող



Արամ Մեյմարյան

«02» 06 2026թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 072 - 26

Նախաձեռնող՝

«ԴԻԼԻ» ՍՊԸ

Տավուշի մարզ, ք. Դիլիջան 3901, Վ.Անանյան փող., / Ը / 34/2

Գործունեությունը՝

Կաթնամթերքի արտադրամասի ընդլայնում և կենսագազի կայանի կառուցում

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Վ.Անանյան փողոց 46/2 և 46/3 հողամասեր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 072 - 26

«02» հունիսի 2026թ.

**Տավուշի մարզի Դիլիջան համայնքի վարչական տարածքի սահմաններում գտնվող կաթնամթերքի արտադրամասի ընդլայնման և կենսագազի կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԴԻԼԻ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան բնակավայր

**Ներածական մաս.** «ԴԻԼԻ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի վարչական տարածքի սահմաններում գործող «ԴԻԼ» կաթնամթերքային համալիրի արտադրամասի ընդլայնում՝ նոր անասնագոմի կառուցում և կենսագազի կայանի կառուցում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվում է է «Բ» կատեգորիայի ընթացակարգերով:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները՝ № 26072024-11-0040 /ծածկագիրը՝ 11-003-0501-0059/, № 26072024-11-0078 /ծածկագիրը՝ 11-003-0501-0057/, Դիլիջանի համայնքապետարանի կողմից 16.09.2024թ.-ին տրված № Ա1-148 նախագծման թույլտվությունը: Դիլիջան համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի դրական եզրակացությունը: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ծրագիրը նպատակ ունի ընդարձակել «ԴԻԼ» կաթնամթերքային համալիրը, ինչը թույլտ կտա արտադրել ավելի մեծաքանակ որակյալ և բնական կանթամթերք, ինչպես նաև օգտագործել գոմաղբը որպես էլեկտրական էներգիայի ստացման աղբյուր: Ծրագիրը կխթանի նոր արդյունաբերություններ, կստեղծի ուղղակի և անուղղակի աշխատատեղեր և այլ ներդնողների ուշադրությունը կգրավի տարածաշրջանի զարգացմանը խթանելու պլանում:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող կաթնամթերքի արտադրամասի ընդլայնումը և կենսագազի կայանի կառուցումը նախատեսվում է տեղակայել Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Վ. Անանյան փողոց 46/2 և 46/3 հողամասերի սահմաններում, որտեղ անասունները պահվում և շարունակվելու են պահվել մսուրային ապրանքների որի ընդհանուր մակերեսը 2.7721 հա է:



Նախատեսվող շինությունները զբաղեցնելու են հողամասերի գումարային մակերեսի մոտ 36%-ը: Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության նախատեսվող շինությունների ճակատային մասից ամենամոտ բնակելի տները գտնվում են մոտ 300-420 մ հեռավորությունների վրա: Տարածքի անմիջական հարևանությամբ առկա են մոտեցման ճանապարհներ: Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքում և դրանից 2 կմ շառավղով հատվածում բացակայում են պատմամշակութային (կամ) և բնության հուշարձանները: Արտադրամասի ընդլայնման շրջանակներում նախատեսվում է կառուցել անասնաֆերմա՝ 500 խոշոր եղջերավոր անասունների համար և 250 կՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ կենսագազի կայան: Նոր անասնաֆերմայի և կենսագազի կայանի կառուցմամբ նախատեսվելու է կթվող կովերի քանակն հասցնել առավելագույնը մինչև 600-ի, որի դեպքում առավելագույն արտադրողականությունը հասնելու է մինչև 15 տոննայի՝ ներկայիս 130 գլուխ կովերի և 2,5-3 տոննա արտադրողականության տարբեր կաթնամթերքային արտադրատեսակներում: Համաձայն նախագծի՝ նախատեսվում է իրականացնել 500 եղջերավոր անասունների համար ախոռ, որն իր մեջ ունենալու է կթման հատված և գրասենյակային տարածք, ինչպես նաև կաթնամթերքի արտադրամաս: Նախատեսված շինությունը տեղակայված է լինելու գոյություն ունեցող շինությունների հետ և դրա 0-ական նիշը նախատեսվելու է 1530 մ բացարձակ նիշով: Շինությունների կառուցումն իրականացվելու է հավաքովի մետաղական կոնստրուկցիաների միջոցով, որոնք միմյանց միացվելու են զողման և հեղուսների միջոցով: Անասնագոմի համար նախատեսված շինության ստորին հատվածում նախատեսվելու է 800 մմ բետոնե պատերի պատմամբ, իսկ ավելի բարձր հատվածում նախատեսվելու է շարժական ցանցի կիրառում, ճակատներ A-E, E-A կողմում իրականացվելու է պրոֆիլավոր թիթեղներով պատվելու են, ինչպես նաև լինելու են դարպասներ, որոնք բացվելու են դեպի առաստաղ: Շինության մեջ նաև նախատեսվելու է գրասենյակային տարածք, որը ֆերմայից առանձնացված է լինելու բետոնե բլոկների շարվածքով և մեկուսիչներով: Նախատեսվելու է նաև 2-րդ հարկի հնարավորություն: Շինության առավելագույն բարձր կետի բարձրությունը սեփական 0-ական նիշից կազմելու է 12.85 մ, 1542.85 մ բացարձակ բարձրությամբ:

Անասնաֆերմայի հողի մակերեսը մոտ 15822 մ<sup>2</sup> է, որից 6903 մ<sup>2</sup>-ին կառուցապատման մակերեսն է: Շինության հատակագծային կառուցվածքն ուղղանկյուն է, կիսանկուղային հատվածում ունի 16 մ երկարություն, իսկ վերին հարկում 48 մ երկարություն, նախատեսված է, որ շինությունը ունենա հնարավորություն հետագայում ընդլայնվելու վերին հարկում, ինչի նպատակով նկուղային հատվածի երկարությունը իրականացված է ավելի երկար: Նկուղային հատվածի պատերը նախատեսված են ե/բ-ով, ինչպես նաև կոնստրուկտիվ լուծումներն իրականացված են ե/բ սյուների և հեծանների միջոցով 7.5 քայլով: Անասնագոմում կենդանիների պահման համար նախատեսվելու են առանձնացված բաժիններ, որոնք իրենցից ներկայացնում են կերակրման և գոմաղբի նախնական կուտակման բջիջներից: Բջիջներն իրենցից ներկայացնում են բետոնյա հատակ: Հատակի թեքությունը հաշվարկված է այնպես, որպեսզի ապահովվի գոմաղբի հոսունությունը դեպի 15-20 սմ խորության երկայնակի խրամուղի, որի մեջ տեղադրված է հորիզոնական փոխակրիչ, ինչի օգնությամբ կարճ ժամանակահատվածում գոմաղբը հեռացվելու է գոմից: Նախատեսվում է անասնագոմի



վերջնամասում կառուցել բետոնյա հոր, որտեղ կուտակվելու է ողջ գոմաբն ու դրա մեջ պարունակվող կեղտաջրերը, որտեղից էլ փակ շնեկային փոխակրիչով կտեղափոխվի կենսագազի կայան: Մաքրման աշխատանքները նախատեսվելու է իրականացնել օրական մեկ անգամ:

Գործարանային արտադրամասի հողամասը զբաղեցնում է մոտ 11898 մ<sup>2</sup>, որից 3037մ<sup>2</sup>-ին կառուցապատման մակերեսն է: Տարածքի խիստ թեքություններից ելնելով նախատեսվելու են նաև հենապատերի կառուցում, որոնց շինարարական մակերեսը կազմում է 140 մ<sup>2</sup>: Նախատեսվում է նաև շինության շուրջ տարածքի հարթեցում, հարթակների և ճանապարհների կառուցում: Ծրագրի իրականացման շրջանակներում նոր ասֆալտապատ ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Նախատեսվում է միայն գրունտային ճանապարհների կառուցում և հարթեցում միայն տարածքի ներսում: Տարածքում նախատեսվող գրունտային ճանապարհների կառուցման և հարթեցման ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 9066 մ<sup>2</sup>, տարածքի հողամասի մոտ 32.7 %-ը:

250 կՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ կենսագազի կայանի կառուցման նպատակը էլեկտրական էներգիայի արտադրությունն է: Կայանը հնարավորություն է տալու գոմադրը վերածել կենսագազի, ինչը ունենալու է դրական ազդեցություն շրջակա միջավայրի համար: Տարեկան 8300 ժամ աշխատանքի դեպքում կայանը տարեկան կարտադրի մոտ 1707750 կՎտ/ժ էլեկտրական էներգիա (օրական՝ 4950 կՎտ/ժ): Կայանի հիմնական բաղադրիչները ներկայացված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում: Ընկերությունը կենսագազի կայանի տարեկան արտադրողականությունն ապահովելու համար անհրաժեշտ քանակի հումքի մեծ մասն ապահովվելու է սեփական անասնաֆերմայից առաջացած գոմադրով, իսկ պակասորդի լրացման համար, այն ձեռք է բերելու հարևանությամբ գործող ֆերմաներից: Կենսագազի կայանի կառուցումը գերծ կպահի ֆերմայում առաջացող գոմադրի այս ծավալների տեղադրումը կամ պահեստավորումը այլ տարածքներում, որը կհանգեցնեք հողերի թթվայնացման, գրունտային ջրերի աղտոտման և մեթանի՝ ջերմոցային գազի, արտանետումը մթնոլորտ: Ուստի կենսագազի կայանի տեղադրումը ոչ միայն կլուծի ֆերմայում առաջացող գոմադրի, որպես թափոնի, կառավարման խնդիրը, այլև էներգետիկ խոչըրը:

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Տարածքում լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում, քանի որ, տարածքն արդեն իսկ ամբողջությամբ կանաչապատ է:

Նախատեսվող տարածքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի: Ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից, որը հանդիսանում է «Վեոլիա ջուր» ընկերության բաժանորդ և առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները: Համալիրի շահագործման ընթացքում ջուր կօգտագործվի կենդանիներին խմելու ջրով ապահովելու, գոմերի հատակների, կթի սարքավորումների լվացման համար: Ֆերմայում ջուրը կօգտագործվի նաև առաջացած գոմադրի հեղուկ խառնուրդի պատրաստման համար:

Նախատեսված գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով՝ նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների անկայությամբ)



մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր բացասական ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվելու են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների համապատասխան խլացուցիչներով ապահովում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինարարական հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում՝ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռքբերում լիցենզավորված մատակարարներից՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բնետոնաշաղախային հանգույցներից,
- մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում:

Շահագործման փուլում բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված են անասնապահական ֆերմայի և կենսագազի ստացման և այրման ազդեցությամբ: Խոշոր եղջերավոր կենդանիների կենսագործունեության ընթացքում առաջանում են տարածքների սպասարկման և աղիքային խմորումից առաջացող արտանետումներ: Շահագործման փուլում հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները: Կաթնամթերքային համալիրի ընդարձակման և շահագործման ընթացքում հողի որակական փոփոխություն չի



նախատեսվելու: Բնապահպանական ռիսկերի նվազեցման համար իրականացվելու են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպվելու են մոնիթորինգային աշխատանքներ:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 320 հազար ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Տավուշի մարզի Դիլիջան համայնքապետարանում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, Դիլիջանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ: Հանրային լսումն իրականացնելուց հետո օրենքով սահմանված կարգով իրականացվել է տեղազննման աշխատանքներ՝ տեղում արձանագրվել և տեսանկարահանվել է խելացի անասնագույնները, արտադրամասը, առկա մասնաշենքերը, անասունների պահման եղանակները, ինչն ամբողջությամբ համապատասխանում է գնահատման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվությանը:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների» ծրագրով, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանով սահմանված պահանջներով (մասնավորապես կարևորելով փոշենստեցման՝ այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը):
4. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:



5. Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ին «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:
6. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմին:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԴԻԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի վարչական տարածքի սահմաններում գտնվող կաթնամթերքի արտադրամասի ընդլայնման և կենսազագի կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Վերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան